« ԱՐՇԻՆ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ » ՍՊԸ
ООО “АРШИН-КОНСТРАКШН”
LLC “ARSHIN-CONSTRUCTION ”

ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ Կարմիրգյուղ, Զ. Շհոյան 63, հեռ. (094) 65-77-81
РА Гегаркуникская область,с.Кармиргюх. ул..З. Шгоян 63, тел. (094) 65-77-81
RA Area of Gegharkunik, v.Karmirgyugh. st. Z. SHhoyan 63, tel. (094) 65-77-81

№ 15/05-25 «15» մայիսի 2025թ.

Վարդենիս համայնքի ղեկավար
պարոն Ա. Խաչատրյանին

Հարգելի պարոն Խաչատրյան

Ի պատասխան Ձեր կողմից 13 մայիս 2025թ. ուղարկված N 1252 գրության, հայտնում եմ Ձեզ, որ հեղինակային հսկողության սահմաններում «Արշին-Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի մասնագետները կատարել են ուսումնասիրություններ և հետազոտություններ Վ. Համբարձումյան փողոցում, որի արդյունքում պարզվել է, որ «Վեոլիա Ջուր» ընկերությունը փողոցի գրեթե ամբողջ երկայնքով 2023-2025թթ կառուցել է նոր ջրագիծ: Ջրագծի կառուցման հետևանքով փողոցի երկայնքով (տնային միացման հատվածներում նաև լայնական) փորվել են խրամուղիներ և իրականցվել հակադարձ լիցք տեղի գրունտով:

Բացի այդ 2022թ.-ից մինչ այսօր Վ. Համբարձումյան փողոցի շահագործման ընթացքում փողոցի մաշվածությունը ևս ավելի է մեծացել, իրականացվել են ասֆալտբետոնե ծածկույթի փոսային նորոգումներ մինչև 5 սմ հաստությամբ, որոնց հիմքը նույնպես չի համապատասխանում այժմյան նորմերին:

Հետազոտության արդյունքում պարզվեց, որ 2022 թ.-ին մեր կազմակերպության կողմից իրականացված Վ. Համբարձումյան փողոցի ասֆալտապատման(միջին նորոգման) նախագծով նախատեսված աշխատանքները այժմ հնարավոր չի իրականացնել:

Առաջարկում ենք նախագծանախահաշվային փաստաթղթերը լրամշակել և միջին նորոգման փոխարեն իրականացնել հիմնանորոգման նախագիծ:

Հարգանքով «ԱՐՇԻՆ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ

Տնօրեն՝ Ա. Շիշանյան

Ստորագրող
ԱՐՄԵՆ ՇԻՇԱՆՅԱՆ
2808890494

2025-05-15 09:18:31 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից